



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





ԱԶԳԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ

Յ՝ՕՐԹԱՔԷՅ

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Գ.

21 ՓԵՏՐՈՒԱՐ 1873

ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ

Ի ՏԻԳՐԱՆ ԵՌԻՍՈՒԾԵԱՆԷ

Կ. ՊՕԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱԾԵԱՆ

— 1873 —

ԱԶԳԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ

Յ՝ՕՐԹԱՔԷՕՅ

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ


Գ.

21 ՓԵՏՐՈՒՐ 1873

Հ. 10 ր. 1/2  
Հ. 40 ր. 1/4  
Հ. 40 ր. 1/4

ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ

Ի ՏԻԳՐԱՆ ԵՌԻՍՏՈՒՅԵԱՆԷ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎԱՆՓԱՅՂԱՎԱՅԵԱՆ

— 1873 —

ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ

Ա.

Տիկնայք և Տեարք

Այնպիսի ժամանակի մը մէջ ուր աշխարհիս ամեն կողմը այս բառը կարտասանուի . ամեն տեղ ամեն գործքի մէջ այն միայն կը փնտռուի . իմաստասէրք և գրագէտք վաճառականք և արուեստաւորք , գիտնականք և աշխարհավարք , միով բանիւ ամեն ընկերութիւնք այդ մոգական բառը կը գործածեն . սովորաբար ժողովուրդը և շատ անգամ ինքզինքնին իսկ խաբելու համար : Կառավարութիւնք անոր իմաստին մէջ կը փնտրուեն իրենց փառքը , ինչպէս նաեւ ժողովուրդք ալ անոր միջնորդութեամբ իրենց նիւթական և թէ բարոյական վիճակին շարժացման խոչընդոտներն բառնալու կը տքնին : Վերջապէս այն բառը որ տասն և իններորդ դարը կուզէ իւրացնել , բայց աշխարհիս հետ միատեղ ծնած է , և անոր հետ միայն պիտի կարենայ վախճանիլ . կարժէ անշուշտ որ ամենուն ուշադրութիւնը գրաւէ , ուստի փափաքեցայ անոր վրայ իմ խորհրդածութիւններս պատուարժան ունկնդրաց հաղորդել :



ՍԿՐԻՊ  
 — 8781 —

Յիրաւի մեծ յանդգնութիւն մ'է ինձ համար յառաջագիմութեան վրայ ատենախօսել, այնպիսի հանդիսականաց առջեւ, որք ոչ միայն հետաքրքրութեան համար կուգան հոս այլ միանգամայն ատենախօսութեան նիւթը քննադատելու : Մանաւանդ երբ կը տեսնեմ ունկնդրաց բեմին վրայ այնպիսի անձինք, որք ինձմէ շատ աւելի կարող են այս նիւթիս վրայ ճառելու : Այո՛ այնպիսի ունկնդրաց առջեւ ելլել ատենախօսելը ինձ համար յանդգնութիւն մը պիտի համարուէր եթէ մէկ քանի տարիէ 'ի վեր ազգային նմանօրինակ հաստատութեանց, և մասնաւորապէս թաղիս մէջ ունեցած պաշտօնավարութեանս ատիւ ըրած ատենաբանութեանցս՝ ազնիւ հանդիսականացդ կողմանէ գտած սիրալիր ընդունելութիւնը զիս չապահովէին այս անգամ ալ մի և նոյն համակրութեամբ լսուելուն ուստի կանխաւ իմութեանս յանդամութիւննիդ խընդրելով կսկսիմ խորհրդածութիւններս ներկայացնել :

Յայտնի է թէ մեր նպատակը միշտ ազգային յառաջագիմութեան վիճակը վնասուելէ, սակայն քանի որ այդ յառաջագիմութիւնը մեր ազգին մէջ, ինչպէս նաեւ տակաւին շատ երեւելի ազգաց մէջ անգամ, ոմանք հսկայաքայլ կանուանեն և ոմանք ալ բոլորո՞

վին կուրանան : Անհնար է որ առանց այս բառին վրայ ընդհանրութեան գաղափարը վնասուելու կարենամք մասնաւորեցնել :

Կարծեմ ոչ ոք կրնայ ուրանալ թէ երբ յառաջագիմութիւն բառն կարտասանեմք, նոյն հետայն բաղդատութեան գաղափար մը կը նշմարեմք մեր մտքին մէջ, և այդ բաղդատական գաղափարը անմիջապէս մեր մտքին մէջ կարթնցնէ անցելոյն վիճակը ներկային հետ, զոր օրինակ երբ այս ինչ աղքը կամ ընկերութիւնը կամ արուեստը յառաջագիմութիւն ըրաւ կըսենք, անմիջապէս մտքերնիս կը բերեմք այն ազգին կամ ընկերութեան կամ արուեստին նախնական վիճակը արդի վիճակին հետ. հետեւապէս երբոր մեր ազգային յառաջագիմութիւնը վընտեմք, մեր ազգին նախնական վիճակին հետ պիտի բաղդատենք. լա՛ւ, բայց ո՞րն է այդ նախնական վիճակը, որ մեր բաղդատութեան սկզբնակէտը պիտի ըլլայ, միթէ 10—20 տարի թէ 10—20 դար առաջ ունեցած վիճակնիս պիտի բաղդատեմք. որն որ ալ ըլլայ, որովհետեւ՝ մեր վիճակը մի միայն մեր անցելոյն հետ բաղդատելով, չեմք կրնար գտնել թէ ինչ աստիճան յառաջագիմութիւն ըրած եմք, մինչև որ նոյն միջոցին մէջ ուրիշ ազգաց ըրած յառաջագիմութեանը հետ չի բաղդատեմք. անհնար է որ առանց

մարդկային ազգի յառաջագիմութեան վը-  
րայ ունեցած գաղափարը գիտնալու, կարե-  
նանք մերինը գտնել:

Եւ երբ այն տիեզերական յառաջագի-  
մութեան կէտը գտնենք, պիտի տեսնեմք,  
Տեարք իմ և Տիկնայք որ շատ քիչ հետադո-  
տութեան պէտք պիտի ունենամք մեր վի-  
ճակը հասկնալու համար, և ասոր պատճա-  
ռը անտարակոյս մարդկային ազգին իւրա-  
քանչիւր անգամոց մէջ եղած յարաբերու-  
թեան սերտ կապակցութիւնն է, որ Արա-  
րիչն սահմանած է իւր յաւիտենական գի-  
տութեամբը: Արդ՝ փնտռեմք թէ ի՞նչ է  
յառաջագիմութիւնը: Երբ դարբերու հողով-  
մանց հետքը փնտռելով անդրագառնամք  
դէպի արարչագործութեան ժամանակը,  
ի՞նչ փիճակի մէջ կը գտնեմք արդեօք մար-  
դըս, որ իբրեւ երկրիւ թագաւորը ստեղծ-  
ուեցաւ: Տկար, մերկ, զուրկ, ֆիզիզական  
և իմացական կարողութենէ, ենթակայ ա-  
մենայն ցաւոց և հեծութեանց, պարտաւոր-  
ուեցաւ կ'ըսէ, Էօփէն Բէլլգան « որսորդու-  
« թիւն ընել աղուեսի նման, բացօթեայ քը-  
« նանալ, և արթնցած ժամանակը առաւօտ-  
« եան ցօղին մէջ դողդղալ »: Բարոյական մա-  
սին մէջ ալ բիրտ զգայականութիւն, վայ-  
րագութիւն, և բռնաբարութիւն, վերջա-  
պէս բոլոր բնագդեցիկ կիրքերէ տիրապետ-

եալ: Արուեստական մասին մէջ՝ բազմաշ-  
խատ անկարողութիւն և յամառ ջանասի-  
րութիւն, որք մի միայն չքաւորութիւն կ'ար-  
տագրեն: Միով բանիւ իմացականութիւնը  
բարոյականի և նիւթական բարեւաւութեան  
մասին, թշուառութեան, երեք ահռելի  
երեւութիցը մէջ շրջապատած էր. ահա նախ-  
նական մարդը:

Բայց այս տեսարանը շուտով կը փոխուի,  
երբ մտածեմք թէ մեզի ծանօթ բոլոր արա-  
րածոց մէջ, մարդս ամենէն կատարելա-  
գործեալն է, որ ըստ պատկերի արարչին  
ստեղծուած ըլլալով, իբաց առեալ արար-  
չագործութեան ընդհանուր շարժումը, որ  
զինքը միշտ առ Աստուած կը մղէ, զանա-  
զանելով այն արարածներէն որք բանական  
չեն, կը կրէ յինքեան բնական և անսահ-  
ման զարգացման սերմը, որ անդադար  
զինքը կը բարեկարգէ և կը բարձրացնէ միշտ  
կատարելագործելով: Ահա այս զարգացու-  
մին է որ յառաջագիմութիւն կը կոչեմք կը-  
սէ Պլէզ բառին բնական նշանակութեամբը:

Յառաջագիմութիւնը մարդուս նկատ-  
մամբ, իւր բանականութեան, սիրոյ և բը-  
նական օրինաց համաձայնութենէն կը ծագի:  
Ուրեմն այս օրինաց համաձայնելու համար  
պէտք է զանոնք գիտնալ, հետեւապէս  
ճշմարտին և գեղեցկին ճանաչողութիւնը



յառաջադիմութեան առաջին պայմանն է :

Արդ այս եզրակացութենէն պարզապէս կը հետեւի թէ մարդկային ազգին ճակատագիրը մեզի բնական կամ արարչագործ ու Աստուածային օրինաց ըմբռնումէն կախումն ունեցաւ որու Ուսուցիչն կրօնքը եղաւ . որ սորվեցուց իրաւանց և պարտուց գիտութիւնը և անոնց տեսական և գործնական սահմանները , ուրկէ ընկերութիւնն հաստատուեցաւ :

Ըսել է թէ կրօնքը բնական կապ մի եղաւ արարչագործութիւնը Աստուծոյ և արարածներն ալ իրենց մէջ միացնելու համար :

Եւ որովհետեւ աշխարհիս կարգադրութեանը մէջ իրարու ստորագասեալ զանազան ոյժերու գրութիւն մը կը տեսնուի , 'ի սկզբբան մարդիկ այս գաղափարը ընկերութեան մէջ ալ վերածելով իրաւունքը բնական ոյժին հետ շփոթեցին , և գերութիւնը ծագումն առաւ :

« Մարդուս բնաւորութեան մէջ է կրօն , կիզօ , չուզել մնալ այնպիսի վիճակի մը մէջ , ո՛ւր իւր ազատութիւնը կը կաշկանդուի , եթէ իւր յանցանքն անգամ ինկած ալ ըլլայ : Որչափ բիրտ , որչափ տգէտ , որչափ անձնասէր և իւր կրից գերի ալ ըլլայ , իւր մէջը ձայն մը կայ , բնազդում մը , որ իրեն կը սորվեցնէ թէ բոլորովին ուրիշ նպատակաւ մը ըս-

տեղծուած է , ուրիշ զօրութիւն մը և ուրիշ ճակատագիր մը ունի : Իւր շփոթ վիճակին մէջն անգամ բարեկարգութեան և յառաջադիմութեան ճաշակը զինքը կը մղէ և միշտ անհանդիստ կընէ :

Ամենէն վայրագ անձնասիրութեան լուծին աակն անգամ , արդարութեան կանխատեսութեան և զարգացման պիտոյքները զինքը կը յուզեն , կ'ըզգայ որ նիւթական աշխարհը , ընկերութիւնը և ինքզինքն անգամ բարեկարգելու կը մղուի . և կաշխատի առանց ըմբռնելու թէ ի՞նչ է այդ պիտոյքը և թէ ինչ աներեւոյթ զօրութիւն մի է , որ զինքը անդադար կը մղէ յառաջադիմելու . բարբարոսք քաղաքակրթութեան օրինաց ազդեցութիւնը զգացած ատեննին , զայն բոլորովին ատելով անգամ , դարձեալ քաղաքակրթութեան կը փափաքէին : »

Հոս՝ Տեարք իմ և Տիկնայք՝ յանկարծ ուրիշ բառ մը ելաւ դէմերնիս , հազիւ սկսանք յառաջադիմութեան ինչ ըլլալը մեկնել . ահա քաղաքակրթութիւնը որ ամուր բերդի մը նման մեր ճամբուն վրայ գեմերնիս կ'ելլէ , և անտարակոյս մեծ յանդգնութիւն մը պիտի ըլլայ զայն մէկ դասի մէջ մեկնելու գելս , եթէ շատ մը համբաւաւոր հեղինակներ անոր ճանապարհը արդէն յարդած չ'ըլլային , հետեւապէս իմ պաշտօնս կը դիւրա-

նայ, անոնց կարծեաց մէջէն ամենէն աւելի ուղղադատ երեւցած մասին վրայ համառօտ տեսութիւն մը ազնիւ ունկնդրացդ ներկայացնելով: Բայց ներեցէք որ յառաջ քան քաղաքակրթութեան անցնելու յառաջադիմութեան վրայ ունեցած գաղափարնիս օրինակով մը բացատրեմ: Գիտութեանց զարգացման մասին մէկդի թողլով նախնական դարերը, ամենքս ալ համամիտ եմք թէ միջին դարը, որ տակաւին այնչափ հեռու չէ մենէ, որչափ ետք էր: Միթէ մադէմաթիքական հանճարեղ գիւտերը Տեքարդի, Լէյպնիցի և Նեւտօնի հանճարոյն ծնունդը չեն: Բնական գիտութեան հայրը կալիլէոս չէ արդեօք, որու կուզէին բռնի աշխարհիս շարժումը ուրացնել ալ բանտին մէջ և ինքը «Սակայն կ'զգամ որ աշխարհս կը շարժի» կը պոռար: Աստղաբաշխութիւնը, Գերլերի, և քիմիագիտութիւնը Լավուազիէի զաւակներն չեն համարուիր, ասոնց ամենքը 15-րդ դարէն ետքը ծնած են:

Արդի անձնական, ընտանեկան կամ ընկերական բարոյականին վրայ, ինչ որ ալ ըլլայ փիլիսոփայից գաղափարը, միթէ մեր բարոյականը իւր թերութիւններովը հանգերձ նախնական բարոյականէն հաշար անգամ աւելի ազնուացած չէ: Այս մասին արդի ազգերը միահամուռ կրնամք բազգատել

Արեւելեան հին ազգաց հետ. առնեմք Սեմական ցեղը, որ Արեւելքի ամենէն ընտիր և ազնուական ցեղն է, և այն միջոցին երբ արեւելք Աշխարհիս լոյսն էր, Մովսիսկան ժողովուրդը զատեմք, որ գրեթէ մին է այսօր, իւր նախնական օրէնքն ու աւանդութիւնները պահպանող:

Ո՞ր երբայցիկն արդեօք այսօր կարմրելով չի կարդար Գատաւորաց ԺԹ. գլուխը. որ երբայցեցիկն մէկը իւր կնոջը հետ ճամբորդութիւն ըրած միջոցին, գիշեր մը գեղի մը մէջ օթեւանիկ կը պարտաւորի, անառակ մարդկանց բազմութիւն մը տունը կը կոխեն, և կը պահանջեն որ այն օտարականը իրենց յանձնուի, տանուտէրը կը պատասխանէ թէ «իւր հիւրը չկրնար յանձնել, բայց անոր կինը և իրեն կոյս աղջիկը իրենց կը յանձնէ»: Ասկից անդին չեմ կրնար երթալ հետաքրքիրք թող կարդան այն պատմութիւնը, և պիտի տեսնեն որ կինը մեռած կը դառնայ ամուսնոյն ձեռքը, և այն Ղեւտացիկն իւր ամուսնոյն ցուրտ մարմինը տասներկու կտոր ընելով, իսրայէլի 12 ցեղերուն մէկ մէկ կը տոր կ'ուզարկէ այն՝ որ պատճառ կըլլայ երբայցի ժողովրդեան մէջ ծագած ցեղական պատերազմին որու հետեւանքը ազգին կործանումն է: Կը թողում Յունաստանի և Հընովմի բարոյականին նկարագրութիւնը ժա-

մանակիս անձկութիւնը չի ներէր հոս մի առ մի բացատրել :

Այսպէս մտաւորախան և բարոյական յառաջադիմութիւնը տեսնելէ ետեւ , բարդատեւք միանգամ արդի արուեստական վիճակը անցելոյն հետ , և հոս ինչ զգալի յառաջադիմութիւն չեմք նշմարել : Չիկայ բան մը որ մեզի այնչափ պարզ երեւնայ այսօր , որչափ որ մէկ շաղպք մը կըսէ Միշէ Շրվալիէ՝ դժուարաւ պիտի հաւատամք որ մարդիկ նախնի դարերուն մէջ չէին ճանչնար զայն , կնիկները կաղային ցորենը : Այն աշխատութիւնը որ այսօր շրոց ընթացքք , հովը , և շոգին կը կատարեն մեր՝ նախնիքը զայն մարդկանց ընել կուտային : Հոմերոս կը պատմէ թէ Բենելորի տանը մէջ աասներկու կանայք կգբաղէին այս պաշտօնին : Թէպետեւ Հոմերոս չըսէր թէ քանի հոգիէ բաղկացած էր Բենելորի տունը , այսու ամենայնիւ գիտեմք թէ Օգիսեւս հարուստ թագաւոր մը չէր : Ուստի նախ և առաջ կրնամք հաստատել թէ ան ատենը ցորենին աղալուն դժուարութեանը պատճառաւ մարդկանց մեծագոյն մասը հաց չէր ուտեր , այլ ցորենը խաշած կամ խորտիկ կուտէին : Կարծեմ ուրեմն եթէ այս 12 դերիներու աղացած ալիւրովը 300 հոգի կը կշտանային քսեմք , ճշմարտութենէ հեռա-

ցած չենք ըլլար : Արդ եթէ 12 հոգի պէտք էր 300 հոգւոց ցորեն հասցնելու համար , ըսել է 1 առ 3 : Փարիզու Սէն Մոռ ըսուած գեղին մէջ շաղպք մը կայ այսօր՝ որ 40 երկանաքար ունի , և մեքենան այն աստիճան պարզ է որ 20 հոգի բաւական են դիշեր ցորեկ զայն քալեցնելու : 24 ժամուան մէջ 770 հեքդոլիտը ցորեն կ'աղայ Ա. տեսակ ալիւրի վերածելով : Այս օրուան մարդկանց գործածած հացը օրը 1 1/2 լիպրայի վրայ հաշուելով 72000 հոգւոց կամ 100000 զինուորի օրական հաց կրնայ պատրաստել : Մենք 72000 առնենք և կը տեսնենք 20 հոգին 72000 ին վրայ բաժնելով , 3600 հոգի կերակրելու համար 1 հոգի մը պէտք է , մինչդեռ Հոմերոսի ժամանակը 23 հոգիին մէկ հոգի մը պէտք էր — ուրեմն այս ճիւղին մէջ յառաջադիմութիւնը ոչ թէ տասնապատկած է , այլ 1 ին 144 անգամ է : Այս հաշուով 1 միլիոն բնակիչ ունեցող քաղաքի մը համար այս մեծութեամբ 14 շաղպք պէտք է , ըսել է թէ 278 հոգի . մինչդեռ Հոմերոսի ժամանակին Յունական քաղաքի մը համար ինչպէս նաեւ Հռովմի ամենէն զարգացման ժամանակը , վասն զի հոն ալ ցորենը գերիները կաղային , ենթադրելով թէ Հռովմ մէկ միլիոն բնակիչ ունենար 40000 հոգիի կը կարօտէր :

Հիմա որ մտաւորական, բարոյական, և արուեստական յառաջադիմութիւնները տեսանք, արդի ժամանակը անցելոյն հետ բազմապատելով պէտք է խոստովանիմք, որ յառաջադիմութիւնը տիեզերաց ամեն կետերուն վրայ միօրինակ կերպիւ չի կրնար հանդիսանալ, տեղ տեղ, ատեն ատեն, յառաջադիմութեան մէկ մէկ մասը կը զարդանան, ուրկէ ընդհանրութիւնը օգուտ կը քաղէ, և շատ երկիրներու մէջ եթէ ժամանակակից ընկերութեանց մէջ անդամ՝ շողիին գիւտէն ետքն ալ անոր զարգացման յամրաքայլ ընթացքը կը տեսնեմք, պէտք չէ զարմանամք, այլ խիստ բնական է այս: Երկիրն դերքք կլիման՝ ցեղը՝ և քաղաքական վիճակը, դիւրութիւններ կամ խոչնդոտներ կը մատուցանեն յառաջադիմութեան: Բայց անուրանալի ճշմարտութիւն մի է, որ չի կայ ազգ մը, ժողովուրդ մը, կրթեալ կամ անկիրթ, որ օր ըստ օրէ, քիչ կամ շատ յառաջադիմութիւն մը չ'ընէ, որ և իցէ ճիւղի մը մէջ. որով ամեն ժողովուրդ առանց գիտնալու կը դիմեն յառաջադիմութեան ճամբով քաղաքակրթութեան մեծ պողոտային մէջ մտնալու, ուր միայն մարդկութիւնը ինքզինքը կրնայ ճանչնալ:

Անցնինք ուրեմն հիմա քաղաքակրթութեան.

Տեսանք որ յառաջադիմութիւն բառը մեր մտքին մէջ կը զարթուցանէ անմիջապէս շարժուն ժողովրդեան մը դազափարը, որ կը քայլ չէ թէ տեղը՝ այլ վիճակը փոխելու համար: Ժողովուրդ մը, որու բարոյական և նիւթական հանգամանքը կ'ընդարձակուի և կը կատարելագործուի:

Արդ՝ պիտի տեսնեմք թէ յառաջադիմութեան և զարգացման դազափարը, ասպարհաբան անուանեալ բառին մէջ գտնուած հիմնական դազափարն է:

Բայց ո՞րն է, այդ յառաջադիմութիւնը, ո՞րն է այդ զարգացումը, կը հարցնէ իրաւամբ կիզօ.

Յառաջ երթամք և պիտի տեսնեմք թէ դարձեալ ինքը այդ հարցման պատասխանը կուտայ:

« Բառին նշանակութիւնը կ'ըսէ թէ քաղաքական կենաց կատարելագործիլն է՝ ընկերութեանց, որ ըսել է մարդկանց իրաւորու հետ ունեցած յարաբերութեան զարգացումն է:

« Երբ այս բառը կարտասանեմք, միով բանիւ կ'ըմբռնեմք զօրուոր դործունէութիւն մը, և ընկերական յարաբերութեանց լաւագոյն կարգադրութիւն մը, մէկ կողմէն զօրութեան միջոցներու արտադրութեան՝ և ընկերական բարեկեցութեան ա-

«ճու մը , միւս կողմէն ալ արտադրեալ զօ-  
 րութեան և բարեկեցութեան , մարդկանց  
 «մէջ արդարացի բաշխումը : Միով բանիւ  
 «քաղաքակրթութիւն ըսելով պէտք է հաս-  
 «կընամք , անձնական և ընտանեկան կենաց  
 «զարգացումը , որ է ըսել է մարդուն զար-  
 «գացումը իւր կարողութեանց , զգացմանց ,  
 «և գաղափարներուն մէջ :

« Պէտք է երկու բան միատեղ փնտռել  
 «ժողովրդեան մը քաղաքակրթութեան մէջ  
 «մտած ըլլալուն համար . անձնական և մի-  
 «անգամայն ընկերական գործունէութեան  
 «զարգացումը , ընկերական յառաջադիմու-  
 «թիւնը և մարդկութեան յառաջադիմու-  
 «թիւնը : Ուր որ մարդուն արտաքին վիճա-  
 «կը զօրանայ , կը բարւոքի . և ուր որ մար-  
 «դուն ներքին բնութիւնը մեծութեամբ կը  
 «փայլի , այս երկու նշանները ժողովրդեան մը  
 «վրայ տեսնուած ժամանակը մարդկային ազ-  
 «գը միշտ հոն քաղաքակրթութիւն կը նշմա-  
 «րէ , եթէ ընկերական վիճակը տակաւին կա-  
 «տարեյազօրծութեան հասած ալ չըլլայ : »  
 Վասն զի զանազան դարերու մէջ եղած քա-  
 ղաքակրթութեան պատմութիւնը մեզի կը  
 սորվեցնէ թէ ամեն դարերու քաղաքակրթ-  
 թեանը վրայ ազդեցութիւն ունեցող երեւե-  
 լի դիպուածները միշտ այս երկու տարրերէն  
 մէկուն մեծամեծ քայլեր առնել տուեր են .

այսինքն անձնական կամ ընկերական զար-  
 քացումը բարւոքելով փոխեր են ներքին  
 մարդը , իւր կարծիքը , բարքը կամ պար-  
 զապէս իւր արտաքին վիճակը բարւոքելով ,  
 մարդուն իւր նմանեաց հետ ունեցած յա-  
 րաբերութիւնը փոխեր են : Չոր օրինակ Քը-  
 ռիստոնէութիւնը՝ ոչ միայն իւր երեւցած  
 ժամանակը , այլ իւր հաստատութեան նախ-  
 նի դարերուն մէջ ամենեւին ընկերական վի-  
 ճակին չէ դպած , այլ ընդհակառակն կը  
 տեսնեմք որ բացայայտ կերպիւ ծանուցած  
 է թէ ամենեւին չպիտի դպչի . գերիններուն  
 կը հրամայէ իրենց տիրոջը հնազանդիլ . այն  
 ատենուան ընկերութեան մեծամեծ չարեաց  
 և անիրաւութեանց և ոչ մէկին դէմ կը յար-  
 ճակի : Այսու ամենայնիւ ո՞վ կրնայ ուրանայ  
 որ Քրիստոնէութիւնը քաղաքակրթութեան  
 ամենէն երեւելի տարրերէն մին չեղաւ : Ին-  
 չու համար , վասն զի փոխեց ներքին մարդը  
 իւր կարծիքները , զգացումները , վասն զի՝  
 վերականգնեց բարոյական մարդը , իմացա-  
 կան մարդը . իրաւ է առանց ուղղակի դըպ-  
 չելու ընկերութեան վիճակին , որն որ փոխ-  
 ուեցաւ դարձեալ , գիտութեանց և արուես-  
 տից զարգացմամբ :


Բայց պէտք է խոստովանիլ , որ քաղաքա-  
 կրթութեան այս երկու տարրերը իրարու  
 հետ այն աստիճան սերտ կապակցութիւն մը

7040 p. 6



ունին, որ կրնամք ըսել թէ իրարմէ անբա-  
 ժան են: Անհնար է որ ժողովրդեան մը ըն-  
 կերական յառաջադիմութիւնը՝ բարոյակա-  
 նին ալ չի նպաստէ: Ասոր ապացոյցն այն է,  
 որ երբ երկրի մը մէջ ընկերական վիճակի վտ-  
 ւոխութիւն մը մտցնել ուզուի, մէկէն անոր  
 հակառակորդները կեւլեն զայն կը պախա-  
 րակեն, ըսելով թէ, այդ վիճակը մարդկանց  
 բարոյական յառաջադիմութեանը արդեւիք  
 պիտի ըլլայ: Մարդկութիւնը միշտ ասոնցմէ  
 մէկը տեսած ժամանակը, միւսին վրայ ալ կը  
 խորհի. եթէ պատմութեան դիմեմք կը տես-  
 նեմք որ ազգաց ծագման ժամանակը անոնց  
 զարգացմանը բոլոր ծառայողներն մի և նոյն  
 խոստումունքը ըրեր են, կրօնական քարոզիչք  
 խնաստունք և բանաստեղծք, և անոնք որ  
 բարքերն ազնուացնելու աշխատեր են՝ միշտ  
 խոստացեր են ժողովրդեան ընկերական վի-  
 ճակին զարգացումը և բարեկեցութեան ա-  
 ւելի արդարացի բաշխումը: Կիզօ վերոյիշեալ  
 խորհրդածութենէն ետքը կը յարէ նաեւ,  
 «Շատ ժամանակէ ի վեր և շատ երկիր-  
 «ներու մէջ, (քաղաքակրթութիւն) բառը  
 «կը դործածուի, ոմանք զայն բարիք մը կը  
 «համարին, ոմանք ընդհակառակն չարիք  
 «մը կը կարծեն, ոմանք զայն ուրախութեամբ  
 «կողմունեն, և ոմանք կը նզովեն, կրնայ  
 «հարցուիլ թէ արդեօք տիեզերական բան

«մ'է քաղաքակրթութիւնը. կայ արդեօք  
 «մարդկային ազգի համաշխարհական քա-  
 «ղաքակրթութիւն մը, մարդկութեան ճա-  
 «կատագիր մը. միթէ՞ դարուց 'ի դարս իրա-  
 «բու յաջորդող ժողովրդեան մէջ, կայ այն-  
 «պիտի բան մը որ չի կորսուիր, այլ կը պար-  
 «տի աճիլ և իբրեւ աւանդ մը որդուց յոր-  
 «դի անցնելով հասնիլ վերջապէս դարերու  
 «վախճանը: Ես համոզուած եմ թէ յիրաւի  
 «կայ մարդկութեան ընդհանուր ճակատա-  
 «գիր մը, քաղաքակրթութեան աւանդին  
 «փոխանցում մը, և հետեւաբար տիեզերա-  
 «կան քաղաքակրթութեան պատմութիւն  
 «մը գրուելու արժանի: Բայց առանց այս-  
 «պիտի մեծ խնդիրներ յարուցանելու, որոց  
 «լուծումը դժուար կ'ըլլայ, երբ ժամանա-  
 «կի և տեղոյ որոշեալ սահմանի մը մէջ կե-  
 «նալու ըլլամք, երբ միայն մէկ քանի դա-  
 «րերու կամ մէկ քանի ժողովրդեան պատ-  
 «մութեանը մէջ ամփոփենք, յայտնի է թէ  
 «այն շրջանակին մէջ, քաղաքակրթութիւնը  
 «իրողութիւն մ'է, որ կրնայ նկարագրուիլ,  
 «պատմուիլ, և որ իւր պատմութիւնն ալ ու-  
 «նի արդէն, որ պատմութեանց ամենէն  
 «մեծն և շահաւորն է. վասն զի նիւթական  
 «և բարոյական աշխարհին, որ ըսել է մարդ-  
 «կութեան ընդհանուր պատմութիւնն է:  
 «Եւ այս՝ երկու գլխաւոր մասն կը բաժնուի,



« որ քան որ քաղաքակրթութեան երկու  
 « գլխաւոր տարրերը իրարմէ անբաժան ալ  
 « ըլլան, այսու ամենայնիւ մարդկութեան  
 « բարոյական զարգացման և նիւթական զար-  
 « քացման պատմութիւններն առանձինն  
 « կրնան հետազօտուիլ » :

Ուստի թողլով այժմ մարդկային հոգւոյն  
 ներքին յառաջադիմութիւնը, որ ըսել է  
 բարոյական յառաջադիմութիւնը, հետազօ-  
 տեմք մարդկային արտաքին յառաջադի-  
 մութիւնը, որ ըսել է ընկերական վիճակին  
 զարգացումը :

Եւ մեր բաղդատութեան կէտերը որո-  
 չակի կարենալ ըմբռնելու համար, սկսինք  
 նախնական ժամանակներու երեւելի ժողո-  
 վրդոց քաղաքակրթութեան վիճակին վրայ  
 ակնարկ մը նետելով, հասնիլ մինչեւ ժամա-  
 նակակից միայն այն ազգաց քաղաքակրթ-  
 ութեան ըրած ծառայութիւնները համա-  
 ոտիւ պատմելու որք ամենէն աւելի կարե-  
 ւորութիւն մը ընծայած են, և 19րդ դարու  
 տիեզերական քաղաքակրթութեան պատ-  
 մութեանը մէջ արդէն տեղ մը գրաւած են :

Տեա՛րք իմ և Տիկնայք, միանգամ յառա-  
 ջադիմութիւն և քաղաքակրթութիւն բառե-  
 բուն մէջ եղած տարրերութիւնը տեսնելուս  
 ետքը, կրնամք յայտնապէս ըսել թէ, յա-  
 ռաջադիմութիւնը միշտ համեմատական է ա-


մեն պարագայի մէջ : Իսկ քաղաքակրթու-  
 թիւնը միշտ բացարձակ է, սա՛ տարբերու-  
 թեամբ միայն, որ իւրաքանչիւր ժամանակի  
 համար՝ մասնաւոր կնիք մը կամ կերպարանք  
 մը կը կրէ : Այս կարծիքն այնչափ հաւաստի է,  
 որ փորձով իսկ կրնայ ապացուցուիլ հին և  
 նոր ազգաց պատմութեանը մէջ : Կը տես-  
 նեմք ժողովուրդներ, որ համեմատաբար ի-  
 բրեց նախնի վիճակին մեծ յառաջադիմու-  
 թիւններ ըրած են, մտաւորական, նիւթա-  
 կան կամ արուեստական զարգացման, որ և  
 իցէ մէկ ճիւղին մէջ. սակայն այնու հան-  
 դերձ իրեց ժամանակին քաղաքակրթութե-  
 նէն զուրկ են : Քանզի քաղաքակրթութիւնը՝  
 յառաջադիմութեան զարգացման իրականու-  
 թիւնը ըլլալով, քաղաքական բարեկարգու-  
 թեանց ներդաշնակ ընթացքովը եւ բարոյա-  
 կան ու մտաւորական պարտուց եւ իրաւանց  
 ճիշդ գործադրութեամբը կը ծնանի :

Օրինակի համար Չինաց և Ճաբոնի ժողո-  
 վրդեան վիճակը քննենք, ինչ մեծ յառա-  
 ջադիմութիւններ չեմք տեսներ հոն զանա-  
 զան ճիւղերու, և մասնաւորաբար արուեստից  
 մէջ, ուր մինչև իսկ արուեստական դաղտ-  
 նիքներ կան տակաւին կատարելագործեալ  
 Եւրոպային բոլորովին անձանթ . եւ բարե-  
 կարգութեան մասին ինչ հսկայաքայլ յա-  
 ռաջադիմութիւնք վերջին 20 տարւոյ մէջ :

Թէպէտեւ հին քաղաքակրթութեան մը աւանդապահներն են, սակայն արդի քաղաքակրթութեան շրջանակէն դուրս են :

Վասն զի հոն իրաւանց և պարտուց սկզբունքը տակաւին ճանչցուած չէ . հոն ժողովուրդը, չէ թէ բռնութեան այլ գերութեան տակ կը հեծէ . մինչդեռ քաղաքական իրաւանց յառաջադիմութեան զարգացումը՝ ազատութիւն և հաւասարութիւն կը պահանջէ, որ 19րդ դարու քաղաքակրթութեան գրոյմն է . և բոլոր այն ազգերը որք այդ դժբաղդը չեն ընդունած, այսօր քաղաքակրթութեան շրջանէն դուրս կը համարուին, որքան յառաջադիմութիւն ըրած որ ալ ըլլան մասնաւոր ճիւղերու մէջ :

Արդ՝ որովհետեւ մարդկութեան ընթացքին մէջ, մասնաւոր յառաջադիմութեանց զարգացման իրականութիւնը զմեզ կամայ ակամայ քաղաքակրթութեան առաջնորդեց, և քանի որ միանգամ մտանք այնպիսի ճամբու մը մէջ, որ ՚ի սկզբան չէինք նշմարած, կարժէ անշուշտ, Տիկնայք և Տեա՛րք, որ հետազօտեմք անոր ծագումը, մինչդեռ մեր այսօրեայ նիւթոյն շրջանակէն դուրս չէ, անոր պատմութեան վրայ համառօտ տեղեկութիւն մը ստանալ :



# Բ .

Ամեն ազգի օրրանին մէջ բռնութեան տիրապետութիւնը կը տեսնեմք . կառավարութեանց հաստատողը սովորաբար աշխարհակալութիւնը կամ մէկ ցեղի մը միւսէն նուաճումն է : Իրաւունքը՝ միշտ զօրաւորին բազուկն եղած է, և բռնաւորութիւնն ալ զօրաւորագոյնին նեցուկը :

Վասն զի անշարժ իւր տոհմերուն մէջ, ուր բանտարկած էին զինքը, կրօնք և աշխարհավարութիւն, իրարու հետ ուժգնաբար սեղմեալ՝ ձերն Արեւելք երբէք չի ճանչցաւ ազատութեան օգտաւէտ յուզմունքներն : Եստութիւնը տակաւին կը ննջէր, և եթէ տեղ մը արթնցած ալ էր, ուշոյժ, և ոչ կատանէր իւր շնորհը : Թագաւորներ և ցեղեր իրարու կը յաջորդէին, ինչպէս ժողովրդեան և կայսրութեանց կործանումը : Բայց տեսարանը որչափ ալ փոխուէր, իրաւանց դաշտաբար երբէք չէր փայլէր այս մարդկային հօտերուն ընկճեալ ճակտին վերայ, որք մեր աչքին առջեւէն կանցնին դերութեան սպիներով : Պատերազմք, աշխարհակալութիւնք, պալատական դաւեր՝ և խորամանկութիւնք, կառավարութեանց անկմանը կը նպաստէին : Մարդիկ տակաւին ինքզինքնուն չէին պատ-



կաներ, և զիրենք պատող չըջանակին խիստ խորը թաղուած էին, իրենց քաղաքական և ընկերական ճակատագրին լուծը զօրաւոր ջանքով մը թօթափելու կարողութիւննին կարենալ զգալու համար:

Յունաստանէն է, շարժման բարեկամ. Յունաստանէն է, որ առաջին անգամ ազատութեան ձայնը բողոք, որու արձագանքը դարերու մէջէն սահելով, մինչեւ մեզի պիտի հասնէր: Չայն երիցս աստուածային. անով բոլոր վեհանձն ապստամբութիւնները իրենց նուիրական բառը կը գտնէին, և բռնաւորութեանց դէմ պատերազմը կըսկսէր յանուն մարդկային արժանապատուութեան:

Անկատար գաղափար մը միայն ունիմք, Ազեքսանդրէն առաջ Յունաստանի գլխաւոր քաղաքաց մէջ եղած փոփոխութեանց վրայ: Եթէ Յունաստանի սահմանադրութեանց վերայ Արիստոտէլի յօրինած գիրքը կորսուած չըլլար, մի ըստ միովէ պիտի կարենայինք քննենել, Յունական աշխարհին մէջ եղած բոլոր կազմակերպութիւնները, որով վարչութիւնը այնչափ քիչ ժամանակի մէջ քաղաքակրթութեան զանազան տեսիլքներուն մէջէն անցաւ, և որու կեանքը այնչափ փառաւոր եղաւ որչափ որ արագընթաց:

Բոլոր Հռովմէական պատմութիւնը թագաւորաց անկումէն ետքը, երկարատեւ կը-

ռիւ մը միայն եղաւ, ժողովրդեան և Պատրիկներուն մէջ: Եթէ այս կռիւը, օր մը դադրէր յաղթանակաւ կամ ապստամբութեամբ, հետեւեալ օրը վերստին կըսկսէր աւելի ուժեղնաբար: Այս կռիւներուն մէջ, կը տեսնուի շարժումը և կեանքը՝ որ ամեն տեղ կըզգացուին: Դժբաղդաբար երբ ժողովուրդը յաղթանակեց, ալ Հռովմէական պատերազմներ չէին մնացած: Հասարակապետութիւնը իւր աշխարհակալութեանց պատճառաւ կորսուած էր. զինուորք փոխանակած էին քաղաքացեաց: Կեսար և Պոմպէոս Հռովմը ծածկած թագուցած էին, ահա այսպէս տիրապետութիւնը կրցաւ հաստատուիլ ժողովրդական ազատութեանց աւերակացը վրայ:

Պէտք է յիշեմք թէ նախնի ընկերութեանց մէջ յուզմունք անվտանգ կրնային երկարիլ, վասն զի դերիներու աշխատութիւնը քաղաքացեաց ապրուստը կը մատակարարէր. այդպէս չէ արդի ընկերութեանց համար: Մեր մէջ քաղաքացին ինքնին կը ճարէ իր ապրուստը, ուստի երկարատեւ յուզմունք, ազատութիւնը սովամահ ընելու միայն կրնան ծառայել:

Հռովմէական աշխարհը իւր երեւակայեալ յառաջադիմութեան մէջ, կը կրէր իւր անկման և բաժանման ներդործական սերմերը: Այնչափ օտար ժողովրդեան մեծ բազմու-

Թիւնը , որ աշխարհակալութիւնը հետզհետէ կայսրութեան կցած էր , անդդալի կերպիւ , իւր բարքը բարեխառնելով , ոյժը կը տկարացնէր : Այն ժողովրդեան ամենքն ալ առանց դիմագրութեան չէին խառնուած այն մեծ միութեան մէջ , որ Հռովմէական կայսրութիւն կը կոչուէր , և անոնցմէ շատերը հաւատարմաբար կը պահէին իրենց նախնի անկախութեան յիշատակը : Այն բազմաթիւ առանձնաշնորհութիւնները որով Հռովմի բնակիչք կը հրճուէին , նուաճեալ դաւաններու բոլոր երեւելի մարդկանց փառասիրութիւնը կը զրգուէր այնպէս , որ ալ ոչ ոք կը փափաքէր Հռովմէական կայսրութեան պատկանիլ , այլ պարզապէս Հռովմի քաղաքացի ըլլալ : Այսպէս խոր փոխակերպութիւն մը կամաց կամաց կը ներդրուէր , շնորհիւ այն երկար ընտրելեաց շարքին , երբ Իտալացիք , Սպանիացիք , Գոթացիք և ըն . հետզհետէ կայսերական աթոռը կը յափշտակէին , դաւերու , մարդասպանութեան կամ զինուորական ապրտամբութեանց միջնորդութեամբ :

Յետոյ կարգը բարբարոսաց եկաւ . Անտոնինոսներէն ետքը Թրակիացիք , Տալմասք և Իլիրիացիք կայսրութեան համար կը կրուուէին : Դար ու կէսին մէջ , բռնի մահուամբ մեռածներուն թիւը վաթսուսի կը հասնի : Այս ապականիչ շարքն սկստըներուն առաջինը

Մաքսիմիլիանոս , հսկայաձեւ և վիթխարի հասակին համար միայն ընտրուած՝ անկիրթ՝ և հազիւ կառավարած ժողովրդեան լեզուն հասկնալու կարող , խիստ յաջողակ կառք մը քաշելու , ծառերը կտորելու , քարերը փոշի դարձնելու , և վայրի ձիեր մարզելու , քան թէ ժողովուրդ մը կառավարելու : Կրսեն թէ իւր քրտինքովը բազմաթիւ սափորներ կը լեցուէին : Դիւրին է մակարեբել թէ այս միջոցին բանականութեան ազդեցութիւնը դադրած էր , անասնական ոյժին տեղի տալու համար :

Ո՞վ կրնար երեւակայել լուծման այնպիսի ահագին շարժում մը , դերութեան՝ արչաւանաց՝ ցեղերու՝ լեզուաց՝ սովորութեանց՝ և կրքերու խառնուրդին հետ շփոթեալ : « Ընկերական աստուծոյ մը ուր գիտութիւնը կանկ կառնէ , և երեւակացութիւնը կը խանգարի » : Ո՞ր քաղաքական կազմութիւնը կրնար դիմանալ կարակալաներու նման հրէշներուն այլանդակութեանցը :

Երբ այս տեսակ էակներ աշխարհիս վրայ երեւնան , իբրեւ լուծման տարր միայն կըրնան ներկայանալ . և անհնար է որ ուշանայ նոր լոյս մը ծագիլ իրենց ըրած խաւարին մէջէն : Այս լոյսը որ կը փայլի կայսրութեան վերջին հորիզոնին վրայ , Քրիստոնէութիւնն է . հետազոտեցէ՛ք իւր ծագումը և կրնաք մեկ-

նել անոր մեծ ազդեցութիւնը, որով աշխարհիս վիճակը կերպարանափոխ եղաւ :

Այս տիեզերական եղծման ժամանակն էր որ Քրիստոնէութիւնը սկսաւ կայսրութեան մէկ քանի տեղերը երեւնալ, թէպէտեւ ՚ի սկզբան ահիւ, քայց կայծակի արագութեամբ յառաջանալ: Ի զուր մէկ քանի արիւնհաշաղախ հալածանքներ կը ջանան խեղդել նոր կրօնքը իւր օրբանին մէջ: Կոստանդիանոս տաճարներ կը կանգնէ անոր, և ահա իւր նպատակին կը հասնի, և ս. քանչեւ ի փոխակերպութեամբ մը Յունական և Հռովմէական գերութիւնը տեղի կուտայ աշխատութեան՝ յարդանաց՝ և ազատութեան ու հաւասարութեան սկզբունքը մարդկութեան բարոյականին մէջ կը թափանծէ:

Կայսրութեան երկուքի բաժանումը՝ մեծապէս կը նպաստէ այս յեղափոխութեան, որ լուսնայն կը կատարուէր: Կոստանդնուպօլիս աւելի յարմարագոյն էր քան զՀռովմ. Քրիստոնէից Աստուածը ընդունելու. բոլորովին նոր քաղաք մը, որ հրաշապէս կը յարմարէր նոր կրօնքի մը: Թէպէտեւ մեր խնդրէն դուրս է, քայց քանի որ Պլանքի տնտեսագիտութեան պատմութեան մէջն անդամ կը յիշէ, ներուի ինձ ալ ըսել թէ, «միայն ապերախտութեամբ « է, որ ՚ի վերջոյ Քրիստոնէութեան օրբանը « Հռովմ. փոխադրեցին. Քրիստոնէութեան

« ճշմարիտ օրբանը Կոստանդնուպօլիս է » : Հոս է, որ քրիստոնէութիւնը տէրութեան կրօնք եղաւ, և սկսաւ կարգադրուիլ օրինաւոր հիմանց վրայ, Հռովմի գետնափորներէն և հալածանաց խաւարչտին բանտերէն ելնելէն վերջը:

Երբ ոգեսպառն Հռովմ իւր վերջին շունչը կը փչէր, հրաշակերտ շէնքերու դադարին մէջ, ասդին նորածինն Պօլիս կը զարգանար գրքերու կոյտի մը վրայ:

Դժբաղդարար ժամանակնիս չի ներէր երկարօրէն հետազօտել մի ըստ միոյ՛ն Բիւզանդեան կայսրութեան, վարչական ճիւղերու մէջ մտուցած զանազան բարեկարգութիւնները, որոց մէջ յայտնապէս կը տեսնուի Քրիստոնէութեան ազդեցութիւնը, ոչ միայն օրէնսդրութեան, այլ մինչև անդամ Տէրութեան Ելեւմտական դրութեան, տըրոց բաշխման, և հաւաքման եղանակներուն մէջ: Բայց ՚ի վերջոյ կամաց կամաց Ասիական բարքերը մուտք գտնելով կայսրութեան մէջ, նա ալ կործանեցաւ, որու պատճառը փնտռելը մեր նիւթէն դուրս է:

Մեր արդեան ազատութեանց օրբանը թաղերու մէջ եղած է, որ Գաղղիարէն Կոստանտին, որք Եւրոպիոյ գրեթէ մեծագոյն մասին մէջ, զանազան կերպարանօք տեղի ունեցած յեղափոխութենէ մը ծագած

են . և ամեն տեղ միեւնոյն հետեւանքն արտադրած : Ըստ երեւութիւն խիստ կրնճ-  
 ուայից հանդէս մըն է , այդ թաղային Կոմ-  
 ակալ ըսուած շարժումը , որ 10 րդ . դարուն  
 մէջ կըսկի , բայց դիւրին է զայն 'ի մի ձու-  
 լել : Միեւնոյն գաղափարը կը գրդէր բու-  
 լոր այն քաղաքները , որք իրենց աշխարհա-  
 կան կամ կրօնական իշխանաց դէմ , կապրու-  
 տամբէին այն աւատապետական Սակաւա-  
 պետութենէն խոյս տալու համար , որու լու-  
 ծը այնչափ ծանր էր : Բայց այս Կոմակալ պէտք  
 չէ չիութել արդի Կոմակալ կոչուած շարժման  
 հետ , որ պարզապէս ժողովրդական աւա-  
 տապետութիւն մը կանգնել կը տընի , և ա-  
 զատութիւն պօռւալով , զայն կը մեռցնէ :

Բնականաբար քաղաքային կենաց բոցը  
 ամեն տեղէ աւելի իտալիոյ մէջ պիտի վը-  
 ուընկեր : Հոն քաղաքները երբէք իրենց  
 կարեւորութիւնը չէին կորուսած :

Մայրաքաղաքին ստորակարգեալ շատ  
 մը փոքրիկ տէրութեանց մէջ Հուովմէական  
 Կոմակալներու յիշատակը տակաւին չէր դադ-  
 րած մտքերը յուզելէ . որոց հետեւանքն ե-  
 ղաւ բոլոր այն հասարակապետութեանց ա-  
 րագընթաց նուաղումը , որք այնչափ պայ-  
 ծառ փայլեցան , և որք բաց 'ի վենետիկէն  
 սակաւատե կեանք մը միայն կրնային ու-  
 նենալ : Իրենց պատմութիւնը յեղափոխու-

թեանց շարք մը միայն կը ներկայացնէ :  
 Բայց ազատութեան սէրը , աւ կռիւններուն  
 մէջ երկրորդական դէր մը միայն կը խաղայ :  
 Գրեթէ ամեն տեղ բաժանմանց պատերազմ  
 մի է , որոց մէջ իրաւանց գաղափարը բու-  
 լորովին կանհետանայ մինչև այնատեն , երբ  
 ժողովրդեան մէջէն ելած , որ և իցէ գլուխ  
 մը իշխանութիւնը ձեռք առնելով , վերջ կու-  
 տայ բոլոր այս վէճերուն ամենքն ալ նուա-  
 ճելով :

Արդի քաղաքական յեղափոխութիւննե-  
 րը գլխաւորաբար ուսմանց վերածնութեան  
 թուականէն կսկսին : Չեմք կրնար ըսել թէ  
 գրագիտութիւնը անոնց միակ պատճա-  
 ուր եղաւ , բայց տարակոյս չկայ թէ մեծա-  
 պէս նպաստեց , փոխ տալով իւր ձայնը ժո-  
 ղովրդական ցաւոց և յոյսերուն արտայայ-  
 տութեանը : Անհնար էր մտաւորական մշա-  
 կութեան աշխատիլ , առանց զարթուցանելու  
 ժողովրդեան սրտին մէջ , մարդկային ար-  
 ժանապատութեան զգացումը և նախնի ա-  
 զատութեան սէրը :

Մէկ փոքրիկ ժողովուրդ մը , Հոլանտա ,  
 միջին դարու կապերէն հաղիւ ազատած , ա-  
 ուայինն եղաւ Եւրոպիոյ մէջ այն վեհանձն  
 ջանից մէկ տեսարանն ընծայելու , որու օրի-  
 նակը կորսուած կը կարծուէր հին ժամանա-  
 կէն 'ի վեր : Այն շարժումը , որ կը խլէ զինքը

16 ըդ. դարուն վերջերը , կրօնական և քաղաքական կրկին բռնաւորութենէն . անտարակոյս պատմութեան գեղեցկագոյն նկարագրութեանց մէջն է : Այս շարժումը դիւրացնողն կամ գլուխ հանողը Հոլանտացւոց այն գաղափարը եղաւ , որ միշտ յիշեցին թէ՛ իրենց անկախութիւնը Հռովմայեցւոց դէմ այնչափ քաջութեամբ պաշտպանող Պարալիւացւոց զաւակներն էին :

Երկրին գիրքը զիրենք յարատե բնութեան հետ պատերազմելու ստիպած , կը պահպանէր և կը նորոգէր միշտ դիմադրութեան սովորութիւնները , որք իրենց հայրենի ժառանգութիւնն էին : Աւատապետութիւնը զիրենք ալ հարուածեց ինչպէս բոլոր Եւրոպան , բայց սա տարբերութեամբ որ իրենց վրայէն սահեցաւ գնաց : Ահա՛ ինչ պատճառաւ պատրաստ գտնուեցան սոքա յաջողութեամբ կռուելու համար նախապաշարմանց և բռնաւորութեան միացեալ զօրութեանցը դէմ , և ահա ինչպէս կրցան օգուտ քաղել յաղթանակէն :

Ով կրնայ մոռնալ , կրտէ Միռապօ , թէ ազատ ժողովրդեանց ամենէն հինն են , և երբէք չի դադրեցան ըլլալէ , թէ մաքրեցին զօրացուցին , քաղաքներով ծածկեցին այնպիսի երկիր մը , որու տարբեր ստուերագրեալ միայն էին : Առաջինն եղան , երկու

դար յառաջ , ներողամտութեան վեհ սկզբունքը դաւանելու , առանց որոյ եղբայրակցութեան գաղափարը չի կրնար մտնել ոչ թէ միայն զանազան ազգաց , այլ մինչև իսկ ընտանեաց մը զանազան անդամոց մէջ : Խիստ շատ անգամ ծովերու ազատութիւնն հաստատեցին , Եւրոպայն խաղաղեցուցին , թագաւորաց իրաւարարն եղան , ժամանակակից ազգաց և ոչ մէկը կրցաւ անոնցմէ առաջ ազատութեան և հարստութեան տիրանալ : Վերջապէս նախախնամութենէն այնպիսի երկրի մը վրայ զետեղուած՝ ուր ջրոց հեղեղման և տարափոխիկ հիւանդութեանց կոտորածներն իրենց հանապազօրեայ չարիքն էին , առանց վճատելու կեցան անոնց դէմը իբրեւ պատուոյ կայան մը հանճարոյ և արիութեան բոլոր սերմերը զարգացնելու համար :

Ստորին Նահանգաց և Անգլիոյ յեղափոխութեանց մէջ , որ անմիջապէս հետևեցաւ առաջնոյն , սա նմանողութիւնը կայ որ երկրորդը առաջնոյն նման միանգամայն քաղաքային և կրօնական կերպարանք ունեցաւ : Բայց իրօք որչափ տարբեր . Անգլիոյ յեղափոխութիւնը թէպէտ և աւելի ուժգին յատկութիւն մը որ անբաժան է ընտանեկան կրօնիւնրէ . այսու ամենայնիւ Հոլանտայինէն աւելի նուազ խոր կամ արմատական եղաւ : 17 ըդ. դարու մէջտեղն սկսելով , քառա-

սուն տարի ետքը պիտի կարենար հասկէս  
կատարուիլ : Պահ մը ֆրոմիլէի ձեռաց մէջ  
կանկ կառնէ , վերստին այն տոհմին ձեռքը  
իյնայլու համար , որու գլուխը կտրած էին :  
— Ասի պատերազմ մ' էր թագաւորական  
գերդատտանի մը դէմ քան թէ բուն իսկ  
թագաւորութեան դէմ : Այսու ամենայնիւ  
միապետութիւնը սա վէճէն կոր 'ի գլուխ ե-  
լաւ և ազատութիւնը յաղթական : Անգղիա-  
ցիք որք իրենց աւանդական իրաւունքներն  
Ստիւարտներու բռնակալութեանը դէմ  
պաշտպանելու նպատակաւ ոտք էին ելած ,  
չէին կրցած իրենց իրաւանց սահմանը ըն-  
դարձակել , բայց անոնց գործադրութիւնը  
իմաստնաբար ապահոված էին :

Տրոց վերաբերեալ խնդիրէ մը ծագած ,  
18րդ դարու մէջ Ամերիկայի յեղափոխու-  
թիւնը , 'ի սկզբան գաղթականութեանց  
մայրաքաղաքին դէմ պատերազմն էր : Ան-  
գամ մը անկախութիւննին ձեռք ձգեղնուն  
պէս , գաղթականութիւնք պարտաւորեցան  
վարչութիւն մը հաստատել զիրենք կառա-  
վարելու համար : Երկու ահագին խոչնդոտք ի-  
րենց կ'սպառնային . զինուորական ոյժը և թա-  
գաւորութիւնը . երկուքէն ալ ազդեցան վա-  
շինկընդի հանճարովի և անշահատիրութեամբ  
բը : Այսպէս ծնունդ առին Ամերիկայի մի-  
ացեալ նահանգները : Այս գաղթականներն

որք նոր էին ազատած , մեծաւ մասամբ աք-  
սորեալներ կամ աքսորելոց զաւակներ էին ,  
որք պարտաւոր էին Եւրոպան թողուլ բըռ-  
նաւորութենէն խոյս տալու համար : Նոր աշ-  
խարհը գացեր էին ազատութեան անյագ  
փափաքով մը . ոչ խտրութիւն դիտէին և ոչ  
առանձնաշնորհութիւն : Ովկիանոսի միւս ե-  
զերքը թողուցեր էին մեր հին միապետու-  
թեանց բոլոր հանդերձանքը : Հետեւապէս  
իրենց հանրապետութիւնը կարծես թէ հո-  
ղէն կը բուսնէր և իւր արմատներուն վրայ կը  
բարձրանար , այն մեծ անառններուն նման ,  
որք զիրենք պաշտպանած էին բռնաւորու-  
թեան դէմ :

Այս Միացեալ նահանգներն հաստատող  
չարժման տարօրինակութիւնն իւր Սահմա-  
նագրութեան և իրեն առաջնորդն եղող  
յայտարարութեան մէջ է : Քաղաքական ըն-  
կերութեանց ճշմարիտ նպատակը առաջին  
անգամն էր որ կառավարութիւնը ինքնին կը  
հրատարակէր : Այս փառաւոր գործքին մէջ  
դժբաղդաբար միմիայն քաղաքացւոց իրա-  
ւունքը կը տեսնուէր . մարդը մոռցուած էր .  
Ուստի գերութիւնը Սահմանագրութեան մէջ  
կը մնար 'ի նախատինս մարդկութեան և իւր  
երաւանց : Այս կերպով անցեալը կրցեր էր  
վերստին ապրիլ իւր ամենէն ահռելի վիճա-  
կին մէջ , այնպիսի ընկերութեան մը ծոցին

մէջ որ բնութեան ինքնակամ արտադրութիւնն կը կարծուէր :

Գաղղիական յեղափոխութեան պահուած էր գտնել և յայտարարել այն ոճը՝ որ ժամանակակից քաղաքակրթութեան դրոշը և մարդկութեան ապագային մէջ ընելու քայլափոխներուն օրէնքը պիտի ըլլար :

Եթէ կուզեմք դադարաւ մը ստանալ այս մեծ յեղափոխութեան երեւան ելլելէն յառաջ Յրանայի մէջ եղած դադարաբաց յուզման վիճակին վրայ , ոչ միայն 18 դ դարու երեւելի գրուած քննքը կարգալու է , ինչպէս Անտիէթիս որ համօրէն ուսմանց բովանդակութիւնն է , այլ ան ատենուան զանազան համառօտ գրուած քննքը , որք է՞ նազան համառօտ գրուած քննքը , որք է՞ կը կոչուին : Այս հրատարակութիւններն ուրիշ բան չէին , եթէ ոչ Գաղղիոյ ձայնը որ ամեն կողմէն կը լսուէր , իբրև կայծակին նախնիքաց որոտման ձայնը :

Այս յեղափոխութեան բոլոր ոգին իրաւանց յայտարարութեան մէջ է . երբէք օրէնսդրաց ժողով մը , հասարակութեան խօսած ժամանակը այնպիսի ազնուական լեզու մը դորձածած չէր : Յեղափոխութեան օրէնքները՝ իւր պատերազմները՝ յաղթանակները՝ ուրիշ բան չէին եթէ ոչ իւր համբաւաւոր յայտարարութեան զարգացումը , որ քաղաքական աշխարհի առանցքը տեղափոխեց :

և մարդկութիւնը որ իւր ծնունդէն 'ի վեր գերութեան մէջ էր , ինքզինքին դարձուց :

« Իւր գաղափարաց՝ զգացմանց և միտ-  
« մանցը մէջ փիլիսոփայական , այս յեղափո-  
« խութիւնը , երեք նպատակ հետազօտեց ,  
« ուզեց հաստատել իրաւունքը՝ զօրութեան  
« դէմ , խելքը՝ նախապաշարմանց դէմ , ժողո-  
« վրդեան գերիշխանութիւնը ցեղերու և  
« տոհմերու գերիշխանութեանը դէմ : Ու-  
« ըիշ բան մը չէր այս , եթէ ոչ անցեալը ա-  
« մեն կողմէն պաշարել , իւր աւերակացը վը-  
« բայ ապագային շէնքը կառուցանելու հա-  
« մար » (Բ. Տօբոս) :

Այս յեղափոխութիւնը անոր համար մեծ կանուանեմք , վասն զի իւր ձայնը որ դարնանային զեփուռի մը նման միլիոնաւոր մարդկանց շունչ առնել տուաւ , ոչ միայն Գաղղիան յուզեց , այլ համայն տիեզերք : Կէօթէ իւր Գերմանական պաղ արևնովը « Նոր թուական մ' » է որ կը բացուի մարդկութեան համար » կոչեց :

Անուրանալի է որ եթէ Գաղղիա յեղափոխութեան պատերազմի դաշտը եղաւ , մարդկութեան համար պատերազմեցաւ և բոլոր միւս ազգերը անոր յաղթանակին պըտուղները վայելեցին :

Ի՞նչ մեծ ծառայութիւն տիեզերական քաղաքակրթութեան : Ազատել մարդը՝ հո-

զը՝ և աշխատութիւնը . ըսել է, ազատութիւն և հաւասարութիւն քարոզել միանգամայն :

Տիեզերական քաղաքակրթութիւնը երկու զօրաւոր շարժիչ ունեցաւ . մէկն է Քրիստոնէութիւնը որ մարդկութեան բարոյական զարգացման աշխատելով նախ՝ կինը ազատեց գերութեան վիճակէն ու ընտանիքը կազմեց , որ ընկերութեան կապն է , և յետոյ 1789ի այս մեծ յեղափոխութիւնը որ Քրիստոնէ 18 դար ետքը եկաւ և նիւթական մարդը գերութենէն ազատեց ինչպէս բարոյական մարդը Քրիստոս ազատած էր :

Ինչ որ ալ ըլլայ հասարակաց դատաստանը , ինչ որ ըլլայ Հռովմի դատաստանը որ երբեմն առանց արածնութեան յանուն ընդհանրական եկեղեցւոյ իւր շանդերն արձակեց յեղափոխութեան դէմ , անիրաւ է : Ոչ ց՞ջի յեղափոխութեան ոգին , եկեղեցիները կործանել և Քրիստոնէին վսեմ բարոյականը ջնջել չէր , այլ ընդհակառակն Քրիստոնէութեան ոգին նուիրագործել էր :

Յեղափոխութեան զեղծումները պիտի ըսեն , ես ալ պիտի պատասխանեմ Քրիստոնէութեան զեղծումները . գիմեմք վիճակագրութեան և տեսնեմք թէ հաւատաքննութիւնը աւելի բազմաթիւ կոտորածներ ըրաւ , անմեղ արիւններ թափեց Քրիստոնէ-

ութիւնը տարածելու համար , չէնէ յեղափոխութիւնը իւր ոգին աշխարհիս ամեն կողմք ծաւալելու համար :

Թէ միոյն և թէ միւսին մէջ զեղծումները չեն հաշուեր , ամեն մարդ գիտէ թէ Քրիստոս իր աշակերտաց պատուէր չի տուաւ երթալ ամեն տեղ սրօք բրօք կամ գաւազանաւ քարոզելու , նոյնպէս ալ յեղափոխութեան յարդարիչներն , որք զայն հրատարակողներն չէին , այլ անոնցմէ շատ առաջ յըղացուած էր , անոնք միայն գործիքն եղան , յեղափոխութեան հեղինակներուն և ոչ մէկին գրութեանը մէջ 7՞9ի զեղծմանց թոյլտուութիւն եղած է :

Գրոց հանգամանքը միայն այդ զեղծումները ընել կուտայ , որոց շարժառիթը շատ անգամ նոյն իսկ գործքին թշնամիներն են . երկար կըլլայ Տեարք իմ և Տիկնայք , յեղափոխութեան իրաւունքը վաստափանելը . Բայց ի՞նչ հարկ , այնչափ հեռուները երթալ , միթէ յեղափոխութեան յեղյեղած վրսեմ սկզբունքին շնորհիւր չէ , որ մենք այս ազատ օդը կը շնչեմք : Ի՞նչ է այն կիւլճանէի հրովարտակը որ Թանդիմաթը կը կոչուի , եթէ ոչ հաւասարութիւն և ազատութիւն , Հաւասարութիւն ՚ի մէջ ամենայն հպատակաց Մուլթանին . ազատութիւն կենաց , ապահովութիւն ստացուածոց : Ո՞վ կրնայ ուրանալ



և չի ճանչնալ իւր բարեբարը. ուրեմն Տաճկաստան երբէք չի կրնար դատապարտել այն յեղափոխութիւնը որու շնորհիւ Արեւելից քաղաքակրթութեան շրջանակին մէջ մըտնելու պատիւն ունեցած է :

Գիտեմ որ ոմանք զիս պիտի քննադատեն, այս ազատութիւն և ապահովութիւն բառերուն դէմ, գաւառական հարստահարութեան խնդիրը յիշեցնելով. էհ, անտեղեակ չեմ ֆիւրտիստանի սահմանադրւոցը վերայ, մեր ազգայնոց կրած տառապանացը, ուր կենաց ազատութիւնը և ստացուածոց ապահովութիւնը գրեթէ ամեն օր կը պղծուին, բայց որոն ձեռամբ. այնպիսի մարդկանց ձեռամբ, որք կառավարութեան անհրնազանդ և ապստամբ ժողովուրդներ են : Ասոնք զսպելու համար, տէրութիւնը հարկ եղած միջոցներն 'ի գործ կը դնէ, և եթէ արդիւնքը կուշանայ, այնպիսի բնական և գիպուածական հանդամանաց պատճառաւ է, զորս քննել մեր նպատակէն դուրս է :

Ուրեմն կրնամք ըսել թէ Տաճկաստանի մէկ քանի գաւառներու մէջ, Սուլթանին կամացն և կառավարութեան հրահանգացն հակառակ գործուած եղեռնագործութիւններն, արգելք չեն համարուիր, անոր արդի քաղաքակրթութեան պողոտային մէջ մտած ըլլալուն : Մանաւանդ եթէ նկատեմք որ Հին

և Նոր աշխարհի երկու հզօր Տէրութիւնները, Ռուսաստան և Միացեալ-Նահանգք Ամերիկայի ո՞րչափ դժուարութեամբ կրցան իրենց դերիններն ազատել և գերեաց առեւտուրն արդիւելու օրէնքը հաստատել, այնպիսի երկիրներու մէջ, ո՞ւր յառաջդիմութիւնն յճրդդարէն 'ի վեր ըրած ահագին քայլափոխներովն, պատրաստած պէտք էր ըլլալ զիրենք դարուս քաղաքակրթութիւնը աւելի շուտով ընդունելու քան թէ Տաճկաստան որ 1839էն 'ի վեր միայն սկսած է իւր յառաջադիմութիւնը :

Այս բաղդատութեան մէջ քաղաքական և ընկերական անտեսութեան վերաբերեալ մեծ խնդիրներ կան, որոց լուծումը, թէպէտեւ կարծուածին չափ դժուար չէ, և ոչ ալ մեր նպատակէն բոլորովին հեռի, բայց ժամանակնուս անձկութիւնը չի ներեր զայն հետազօտել :

Արդ, Տեարք իմ և Տիկնայք, յառաջադիմութեան և քաղաքակրթութեան ինչ ըլլալը փնտռելու համար, գրեթէ տիեզերական ճանապարհորդութիւն մը ընելէ ետքը, տեսանք թէ ինչպէս ինքզինքնիս մեր երկրին մէջ գտանք : Տակաւին մէկ դար մը չեղաւ, այն յեղափոխութեանէն 'ի վեր որ դարուս քաղաքակրթութիւնը հաստատեց, կը տեսնեմք թէ այսչափ քիչ միջոցի մէջ ինչ

հրաշալիքներ գործեց . ամեն մէկերնիս անց-  
եալը թողլով մի միայն մեր ականատես ե-  
ղած անցից վրայ եթէ խորհիմք բաւական  
է : Արեւելեան պատերազմէն սկսեալ երկ-  
րին վիճակը բաղդատեմք, միթէ չեմք տես-  
ներ այն հիմնական փոփոխութիւնները, որք  
մեր նիւթական և թէ ընկերական վիճակին  
վրայ շարունակ կը ներգործեն : Իրաւ է կան  
երկիրներ, ուր զարգացման տեղ յետադի-  
մութիւն կայ . արուեստներ կան յառաջա-  
դիմութեան և արուեստներ կան յետադի-  
մութեան ենթակայ, որոց պատճառները  
պարզապէս քաղաքական տնտեսութեան  
գիտութեան պատկանելով, չի պիտի կըր-  
նամք առ այժմ մեկնել :

Ուստի թողլով հո՛ս Տաճկաստան քիչ մը  
ալ մեր ազգին վիճակը քննենք, Հո՛ս իմ  
պաշտօնս աւելի կը դիւրանայ, Տօքթօն Շիշ-  
մանեան բարեկամիս, Լսարանի հաստատու-  
թեան գիշերը, ըրած ատենախօսութեան  
պատճառաւ : Վասն զի նա բացատրեց Եւ-  
րոպական քաղաքակրթութեան, որ ես Տիե-  
զերական քաղաքակրթութիւն կանուանեմ,  
մեր ազգին վրայ ըրած ազգեցութիւնը,  
Ներուի միայն ինձ յաւելուլ թէ, Արեւել-  
եան ուրիշ ժողովրդեան մէջ մեր ազգը ի-  
րաւամբ կրնայ պարծիլ, եթէ ոչ նիւթական  
յառաջադիմութեան գոնէ ընկերական յա-

ռաջադիմութեան մասին, արդի քաղաքա-  
կրթութեան ազգեցութենէն իբրեւ ամե-  
նէն աւելի օգտաշահը :

Մեր ազգին Սահմանադրութիւնը, և  
զայն ձեռք բերելու համար կրուած տա-  
ռապանքները, և բուն իսկ այս օրուան  
ազգին վիճակը, ըսածներուս ապացոյցն են :  
Այո՛ շատ թերութիւններ կան մեր ընկե-  
րական ընթացքին մէջ, շատ սխալ գաղա-  
փարներ կան շտկելու կարօտ, բայց այսու  
հանդերձ Հայն յառաջադիմած է, թէպէտ  
և ոչ հոպոպոպ, ինչպէս ոմանք կը կարծեն,  
այլ ընդհակառակն, բաղդատմամբ իւր կա-  
րողութեանը և ունեցած տարրերուն համա-  
քայլ կրննթանայ, բայց կը քալէ :

Յառաջադիմութեան ծաւալման տարր  
կը համարուին այն ամեն գործքերն, որք  
ժողովրդեան բարոյական և թէ նիւթական  
շահերուն վրայ, որ և իցէ ներգործութիւն մը  
կրնան ընել : Առ հասարակ արուեստք և գի-  
տութիւնք ի բնէ կոչուած են այս պաշտօ-  
նին . հարկ չէ խիստ հեռուներն երթալ, գրա-  
նելու համար թէ ինչ մեծ դեր խաղացած են  
և կը խաղան տակաւին միայն արուեստք, տի-  
եզերական քաղակրթութեան վրայ : Նմանա-  
պէս գիտութեանց հրաշալեացը վրայ խօսելը  
բոլորովին աւելորդ կը համարիմ, հանրածա-  
նօթ ճշմարտութիւններ լինելուն համար :

Ուստի ազգային վիճակին վրայ ակնարկ մը ներտեսնէս ետքը չի վարանիմք ըսելու թէ քաղաքակրթութեան շրջանակին մէջ մըտած եմք, շնորհիւ մեր Ազգ. Սահմանադրութեան. ջանամք զայն պահպանել միշտ խոհեմ միջոցներու դիմելով. որու համար պէտք է քարոզել:

- « Ազատութիւն առանց Ապերասանութեան
- « Հնազանդութիւն « Գերութեան
- « Կրօնք « Մոլեռանդութեան
- « Հաւատք « Նախապաշարման
- « Փիլիսոփայութիւն « Անաստուածութեան

Ասոնք են ահաւասիկ ազնիւ հանդիսականք, մեր ազգին այսօրուան պէտքերն, որոց ծաւալման սկզբնական տարրը, հասարակաց կրթութիւնն է, որու միջոցներն են, ինչպէս ամենքդ գիտէք նախ վարժարաններն, և ապա լրագիրք, թատրոնք և լրատարանք: Եւ ոչ մէկ ազգի մը մէջ այս հաստատութիւններն կրցած են մէկէն 'ի մէկ իրենց պաշտօնն ամենայն հաւատարմութեամբ կատարել, յառաջագիմութեան նման, որու ծառայել է պաշտօնին, իրենք ոչ միշտ կատարելագործութեան ենթակայ են: Պէտք է աշխարք անոնց խոչնդոսները փարատելու, որոց գլխաւորն է մոլեռանդութիւնն և նախապաշարումը, որ հաւատարմութեան թշնամիներն են, և միշտ կարգելուն յառա-

ջագիմութեան ընթացքը, քաղաքակրթութեան կառքին մէջ իբրև եղբայր մտնալ ուղղ անձանց մէջ խտիր յարուցանելով. . . .

Գիտեմ, ազնիւ հանդիսականք որ ժամանակն անցաւ, և իմ խոստմանս հակառակ երկար խօսելով, գուցէ ձեր համբերութիւնն չարաչար գործածէի. բայց անհնար է որ կարենամ խօսքս աւարտել, առանց համառօտ տեսութիւն մ'ալ մեր թաղին ազգային վիճակին վրայ ընելու, որ ամենէն աւելի կարեւորն է մեզի համար:

Հոս ուրախութեամբ կը տեսնեմք, որ մայրաքաղաքիս սին թաղերէն աւելի զգալի է յառաջագիմութիւնը. մանչ տղայոց երկու վարժարաններէն 'ի զառ, Աղջկանց դաստիարակութեան համար յատկացեալ վարժարան մը, որ իւր սկսած օրէն 'ի վեր, առանց մեծամեծ խոստումներ ընելու, լռիկ մնչիկ կը յարատեւէ բարելաւութեան մէջ, կրթելով գիւղին աղջիկներն անխտիր մտաւորական և բարոյական դաստիարակութեամբ, որոց շատը արդէն մայր ըլլալու կողուած իբրև առաքինի ամուսնոց օրինակներ կրնան ընծայուիլ:

Այս վարժարանին խնամակալուհի Տիկնայք, բաւական չի համարելով իրենց ըրած ծառայութիւնը մտաւորական մշակութեան բեղմնաւոր հացը սպագայ մարց մատակա-

ըստերևոյ, թաղին ազգատայ նիւթական հաս-  
ցըն շամբելու նուիրական պաշտօնն ալ ըս-  
տանձնած, կը յարատեւեն ամենայն արիւ-  
թեամբ ազգատախնամ ընկերութիւնը զօրա-  
ցընելու :


Թատրը որ լուսաւորութեան և արհեստի  
վառարանն է, մեր ազգին համար այս գե-  
ղին մէջ ծնած, և երկար ատեն ասդին ան-  
դին տատանելէ ետքը, դարձեալ հոս կա-  
տարեւազործութեան կը դիմէ, շնորհիւ Բա-  
րեասէր ընկերութեան անձնուէր ջանից, որոց  
կը միանայ այս անգամ Լսարանի ընկերու-  
թիւնն ալ, ժողովրդեան մտաւորական մշա-  
կութեան զարգացմանը աշխատելով, միան-  
գամայն իւր ճաշակը դէպ 'ի լաւն և ճշմարի-  
տըն առաջնորդելու համար, առանց որոյ  
ճանաչողութեանը եղած յառաջադիմու-  
թիւնները այս օր յետադիմութիւն պէտք է  
կոչուին :

Իրաւ է որ Լսարանի հաստատութեան մա-  
սին մեր թաղը առաջինը չէ եղած, բայց  
դաշափարը դարձեալ մերը կրնայ համար-  
ուիլ, երբ վերձանութեան Թանգարանի  
հաստատութեան հիմնադիծը քննեմք, որ  
առաջին անգամ մեր թաղին մէջ հաստատ-  
ուեցաւ, և զայն կենդանացնելու համար  
եղած ջանքերն յուսամք թէ ապարդիւն չի  
պիտի ըլլան :

Միով բանիւ ազնիւ հանդիսականք, պար-  
ծանօք կրնամք ըսել թէ մեր թաղը յառա-  
ջադիմութեան մէջ է, վերոյիշեալ ազգային  
հաստատութեանց օր ըստ օրէ զարգանալուն  
համար, քաղաքակրթութեան մէջ է, վասն  
զի հոս ընկերական յարաբերութիւն կայ ազ-  
գայնոց մէջ, և համազգային դաստիարա-  
կութեան և յառաջադիմութեան սէր մը ի  
վաղուց ծնած՝ օր ըստ օրէ կաճի և կը բեղմ-  
նաւորի, ընտանեաց մէջ ծաւալելով այն  
վեհ սկզբունքը թէ « Եղբարք եմք մեք » :



Faint, illegible text, possibly bleed-through or mirrored text from the reverse side of the page. The text is arranged in approximately 10 lines.



704



9/2 1 712.



Р. У.

№ 2040